



# ՎԵՐԱՊԱՏՈՒԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Փոխներգործուն (ինտերակտիվ)  
մեթոդների կիրառումը պատմության  
դասերին

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Բաբայան  
Ք.Վաղարշապատ Մ.Գորկու անվ. Հմ 5 ավագ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան

Արմավիր 2022թ



## Բովանդակություն

1. Նախաբան	3-4
2. Ուսուցման փոխներգործուն մեթոդների ներկայացում	4-6
3. Համագործակցային ուսուցում. հնարներ և մեթոդներ	7-16
4. Ամփոփում	16



## Նախաբան

Հայաստանն ունեցել է ուժեղ կրթական համակարգ, որը ստեղծվել է իշխանության վարչաիրամայական համակարգի խնդիրները լուծելու նպատակով, մասնավորապես՝ կառավարման վարչաիրամայական համակարգի անվտանգության ապահովում, համակարգի ինքնավերարտադրում և կենտրոնացված տնտեսության կարիքների ապահովում: Դպրոցներում հիմնականում կիրառվում էին ուսուցման ուսուցչակենտրոն մեթոդներ: Դասավանդման և ուսումնառության երկու հիմնական սկզբունքներն էին գիտելիքների անգիր անելն ու գնահատման միջոցով դրա վերարտադրման ստուգումը: Դա բավարարում էր սովորողներին կրթության հաջորդ աստիճանին նախապատրաստելուն և կենտրոնացված տնտեսության պահանջներին: Ուսուցման մեջ որդեգրված էին անհատական և մրցակցային մոտեցումները: Սովորողների մասնակցությունը ուսուցման ընթացքում հիմնված էր հետևյալ սկզբունքի վրա. « Լավ սովորողները քաջալերվում են և ավելի են առաջադիմում, մյուսները ինքնամեկուսացվում են և ավելի են թուլանում»:

Վերջին տասնամյակների ընթացքում կատարվել են համընդհանուր փոփոխություններ, որոնք ընդգրկում են տնտեսությունը, հասարակական կյանքը, մարդկանց հոգեբանությունը, կառավարումը և նոր արժեքները: Կրթությունը, որպես ավանդաբար պահպանողական համակարգ փոփոխվում է դանդաղորեն: Հայաստանը, որպես զլոբալ հասարակության մաս, պետք է քայլ առ քայլ իրականացնի արմատական փոփոխություններ, ինչը թույլ կտա լուծել հրատապ խնդիրները և ինտեգրվել համաշխարհային հասարակության մեջ:


Հայաստանում իրականացվող կրթական վերափոխումները նոր խնդիրներ են դնում ուսուցիչների առջև: Որքան էլ գնահատելի ու կիրառելի է անցյալի փորձը, միևնույն է, փոփոխություններն անխուսափելի են: Դպրոցն ու ուսուցիչը երբեք վակուումում չեն գործել, նրանք միշտ գործել են կոնկրետ արժեքային համակարգում, կոնկրետ ժամանակում և միջավայրում: Հենց այդ հանգամանքն էլ ենթադրում է, որ ուսուցիչը անընդհատ սովորելու, ժամանակի պահանջներին համաքայլ ընթանալու խնդիր ունի:

Ուսուցման մշակույթի փոփոխությունն դպրոցում



Չօգնել

Չասել/Չխոսել



Օգնել իրար

Ինչքան խոսում եք, այնքան սովորում եք

Ավանդական դպրոց	Կառուցողական դպրոց
<ul style="list-style-type: none"> <li>-կրթակարգը/ուսումնական ծրագիրը հիմնականում ներկայացված է մասից դեպի ամբողջը</li> <li>-ծրագրային վարժությունները տեղակայված են դասագրքում</li> <li>-աշակերտը դիտարկվում է որպես &lt;&lt; դատարկ անոթ &gt;&gt;, որի մեջ հոսում է տեղեկատվությունը</li> <li>-ուսուցիչները ընդունում են հավերժ սովորեցնողի կերպար</li> <li>-արժևորվում են ճիշտ պատասխանները</li> <li>-գնահատումը հենված է ստուգման վրա և առանձնացված է ուսուցումից</li> <li>-աշակերտները հենց սկզբից և հիմնականում աշխատում են միայնակ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>-կրթակարգը/ծրագրերը ներկայացվում են ամբողջից դեպի մասերը</li> <li>-արժևորվում են աշակերտների կողմից հարցեր տալն ու տեղեկատվության իսկական աղբյուրները</li> <li>-աշակերտները դիտարկվում են որպես ակտիվ մտածողներ, ովքեր ունեն իրենց սեփական գաղափարները</li> <li>-ուսուցիչները դրսևորում են փոխներգործուն վարքագիծ</li> <li>-արժևորվում են աշակերտների տեսակետները</li> <li>-գնահատումը միահյուսված է ուսուցման հետ և տեղի է ունենում դիտարկումների միջոցով</li> <li>-աշակերտները հենց սկզբից աշխատում են խմբում</li> </ul>

### **Ուսուցման/ուսումնառության փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ**

Այսօր բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Տերմինը կարելի է պարզաբանել հետևյալ կերպ. Անգլերենում << inter >>-փոխադարձ, << act >>-գործողություն: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի (դասարանի) անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա:

Ինտերակտիվ ուսուցման հիմնական բնութագրիչներից մեկը համապատասխան միջավայրն է, որտեղ երեխան զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը, ինչը ուսուցման գործընթացը դարձնում է արդյունավետ: Ինտերակտիվ ուսուցման էությունն այն է, որ բոլոր սովորողներն ընդգրկվում են ուսումնառության մեջ: Ընդ որում, յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է անում, տեղի է ունենում գիտե-



լիքների, մտքերի փոխանակում: Ի դեպ, դա իրականացվում է բարյացակամության և փոխօգնության մթնոլորտում, որը նպաստում է ոչ միայն նոր գիտելիք ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը, այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի:

Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը, գերակայությունը մյուսների, ինչպես նաև մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ: Այսպիսի ուսուցման ընթացքում աշակերտները սովորում են քննադատաբար մտածել, տեղեկատվության վերլուծության հիման վրա բարդ պրոբլեմներ լուծել, ինչպես նաև քննարկել այլընտրանքային տեսակետներ, ընդունել կշռադատված որոշումներ, մասնակցել բանավեճերի և այլն: Դասերի ընթացքում կազմակերպվում են անհատական, խմբային, զույգերով աշխատանք, կիրառվում են հետազոտական ծրագրեր, դերային խաղեր, փաստաթղթերի և սկզբնաղբյուրների հետ աշխատանք, ստեղծագործական գործունեություն և այլն:

Ինտերակտիվ ուսուցումը գործնականում կիրառելու համար կարևոր պայման է անձնական մասնակցությունը նման ոճով ուսուցմանը: Այլ կերպ ասած, ուսուցչի կողմից ակտիվ մեթոդների յուրացումը առանց անմիջական մասնակցության անհնար է, կարելի է կարդալ մեծ քանակությամբ գրականություն ուսուցման ակտիվ մեթոդների մասին, բայց դրանք կիրառել հնարավոր է միայն անձնական փորձի շնորհիվ: Այս աշխատանքում ես կփորձեմ ոչ միայն ներկայացնել պատմության դասավանդման ժամանակակից մեթոդները, այլև իմ փորձը դրանց կիրառման գործում:

Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում: Բայց այդ ընտրությունը չի կարող կամայական բնույթ կրել: Մանկավարժական գրականության մեջ առանձնացված են ուսուցման մեթոդների ընտրության վրա ազդող մի շարք գործոններ, ներկայացնեմ դրանցից մի քանիսը.

- ուսուցման նպատակները և խնդիրները,
- բովանդակությունը,
- ուսումնական նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը, տարիքն ու աշխատունակությունը, ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպական պայմանները,



-ուսուցիչ-աշակերտ հարաբերություններ (ավտորիտար, համագործակցային),

-սովորողների թվաքանակը դասարանում, ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Ի վերջո, կարող են ծագել նաև չնախատեսված կամ անսպասելի հանգամանքներ, որոնք կթելադրեն ուսուցչին փոխել նախապես ընտրված մեթոդը՝ ստեղծված իրավիճակը շտկելու կամ հաղթահարելու նպատակով: Բոլոր դեպքերում չկա դեպի նպատակը տանող միակ ճանապարհ, և որևէ մեթոդ, եղանակ, սկզբունք, հնար չի կարող համարվել միակ ճշմարիտը: Իմ փորձը հուշում է, որ ակտիվ մեթոդների կիրառման դեպքում առաջանում են դժվարություններ, մասնավորապես ժամանակային առումով: Այդ պատճառով պարբերաբար կիրառում եմ ոչ թե մեթոդն ամբողջությամբ, այլ դրա առանձին տարրեր, ինչպես նաև փոխտնօրենի համաձայնությամբ հարմարեցնում եմք դասացուցակը՝ կազմելով կրկնակի ժամեր: Այս մեթոդներն օգտագործում եմ նաև արտադասարանական և նախասիրական պարապմունքների ընթացքում. բաց դասեր, սեմինարներ, բանավեճեր և այլն:

## **Աշխատանք փոքր խմբերով**

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել: Ուսուցման այս ձևը ժողովրդավարական հասարակության ձևավորման կարևոր նախապայմաններից է: Աշխատելով տարբեր ընդունակություններ, հմտություններ, բնավորության գծեր ունեցող դասընկերների հետ, աշակերտները զարգացնում են բազմազան իրադրություններում արդյունավետ գործելու հմտություններ և որակներ: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտների ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտը ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին: Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ, անհատական հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) –խմբի հետ, ապա աշակերտներն արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Փոքր խմբերով աշխատանքը ինքնանպատակ չէ: Այն միջոց է համագործակցային ուսուցման հասնելու ճանապարհին:



## Համագործակցային ուսուցում

Կրթության հայտնի տեսաբաններ Ժան Պիաժեն, Լև Վիգոտսկին և ուրիշներ, պնդում են, որ երեխայի մտավոր զարգացման գործում սոցիալական փոխազդեցությունն ու միջանձնային հաղորդակցությունը կարևոր գործոններ են: Ուսուցչի համար շատ կարևոր է հասկանալ, որ ոչ միշտ են փոքր խմբերը համագործակցային: Աշակերտներին մի սենյակում նստեցնելը, մի խմբում ընդգրկվելը, նույն առաջադրանքը տալը դեռևս բավարար չեն համագործակցային ուսուցման մասին խոսելու համար: Պետք է նշեմ, որ փոքր խմբերով աշխատանքներ կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը նվազ է: Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված ու արդյունավետ լինի փոքր խմբերով աշխատանքը:

Ուսուցման մշակույթի փոփոխություն դասարանում

Ավանդական նորմերը դասարանում	Համագործակցային նորմերը դասարանում
<ul style="list-style-type: none"> <li>-կոնկրետանալ միայն իր աշխատանքի վրա</li> <li>-չխոսել – չադմկել</li> <li>-չօգնել մյուսներին՝ կատարելու առաջադրանքը</li> <li>-չխնդրել օգնություն</li> <li>-նայել և դեմքով շուռ գալ դեպի ուսուցիչը</li> <li>-լսել միայն ուսուցչին</li> <li>-կատարել միայն այն, ինչ հանձնարարված է անելու</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>-օգնել մեկ մեկու՝ հասնելու հաջողության</li> <li>-ինչքան խոսում եք, այնքան սովորում եք</li> <li>-խմբում պատասխանատվություն վերցնել մյուսների համար</li> <li>-խնդրել օգնություն</li> <li>-լսել բոլորին և խոսել բոլորի հետ</li> <li>-հարցնել մյուսների կաճիքը</li> <li>-ակտիվ լինել, խոսել</li> <li>-գնահատել խմբի և նրա անդամների աշխատանքը՝</li> </ul>

## Մեթոդական հնարներ

Ուսուցման արդյունավետության բարձրացման պայմաններից մեկը ուսուցչի կողմից բազմազան մեթոդների կիրառումն է, դրանց ներդաշնակ համադրումն ու տրամաբանական անցումներն մեկից մյուսին: Այս իմաստով արդյունավետ են պարզ և կազմակերպական մեծ նախապատրաստություն, միջոցներ և նյութեր չպահանջող մեթոդական հնարները: Սրանք ինքնուրույն կամ անկախ կիրառություն ունեն, սակայնավարտուն, վերջնական արդյունք ստանալու նպատակով հաճախ ներառվում են ամբողջական մեթոդների կազմում:



**1. Խմբավորում.** օգնում է աշակերտներին ազատ, անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ, հնարավորություն է տալիս մեծ ծավալով մտքեր, գաղափարներ կուտակել, այնուհետև մտածել և բացահայտել այդ գաղափարների միջև գոյություն ունեցող կապերը: Հնարը կարող է օգտագործվել դասի տարբեր փուլերում, կարող է կատարվել անհատապես, զույգերով կամ փոքր խմբերով: Կարելի է լիրատել ինչպես ավանդական, այնպես էլ համագործակցային դասի ժամանակ:

Նկարագրությունը. Գրատախտակին գրում ենք բանալի բառը կամ թեման և հանձարարում շուրջը գրել թեմային առնչվող բառեր, իրադարձություններ, տարեթվեր, այնուհետև գծերով միացնել իրար հետ ինչ-որ կապ ունեցող բառեր: Անհատական կամ խմբային աշխատանքի արդյունքները ներկայացվում են ամբողջ լսարանին, կարելի է նաև անհատապես կատարված աշխատանքները սովորողները կարող են նախապես քննարկել զույգերով կամ ուսուցչի հետ:

**2. Ձևակույտ.** այս հնարը կարելի է կիրառել որևէ թեմայի կամ ենթավերնագրի ինքնուրույն ուսումնասիրության համար , եթե այն ծավալով փոքր է : Սովորողները ուսումնասիրում են հանձնարարված նյութը ինքնուրույն և կազմում են նյութին վերաբերող 2-3 հարց , երկրորդ փուլում կազմված հարցերի միջոցով քննարկում են նյութը զույգերով, հետո չորս հոգով, որից հետո կազմակերպվում է համադասարանային քննարկում ուսուցչի կողմից կազմված հարցերով:

**3. T-ձև և m-ձև աղյուսակ.** Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը


Աղյուսակը ճկուն է, կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս, դասերի տարբեր փուլերի ընթացքում, և ավանդական, և համագործակցային դասերին:


m-ձև աղյուսակը T-ձև աղյուսակի մեկ այլ տարբերակ է, որը միևնույն հասկացության երեք տարբեր վերաբերմունք կամ կարծիք արտահայտելու հարմար միջոց է:

1	2	3
---	---	---






**4. մտքերի քարտեզագրում.** Քարտեզը սկսում են կազմել հետևյալ կերպ: Նախ շրջանի մեջ է առնվում թեման, գաղափարը կամ հասկացությունը, որից հետո հանձնարարվում է գրել ուղեկից հասկացությունները, մտքերն ու գաղափարները, վերցնել դրանք օղակների մեջ, միացնել իրար և ստանալ բաղմամբ պատկեր, որից հետո աշակերտները օգտագործում են պայմանական նշաններ. ? - անհրաժեշտ է ճշտել, + - ուսումնասիրությունը ավարտված է, հասկանալի, ! – հետաքրքիր է , պետք է հիշել: Օրինակ. 10-րդ դասարանի հայոց պատմության <<Հայկական քաղաքակրթության ձևավորման պատմաաշխարհագրական պայմանները>> թեման աշակերտները կարող են քարտեզագրել.




**5. Վենի դիագրամ.** Կառուցվում է երկու կամ ավել շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այն կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով, Վենի դիագրամով հստակ առանձնացվում և կարևորվում են երկու կամ ավել հասկացությունների ընդհանրությունները և շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները: Վենի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք (երկու հասկացությունների համեմատություն), այնպես էլ բարդ (երեք-չորս հասկացությունների համեմատության համար):





**6. Պրիզմա.** հիմնական նպատակը ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած ասոցիատիվ կապերի վերհանումն ու արձանագրումն է: Պրիզման կիրառվում է դասի խթանման փուլում ապահովելով ինչպես աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը:



**7. Քառաբաժան.** հարմար է տեքստի հետ աշխատելիս, կարելի է կիրառել փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքը սկսելուց համար անհրաժեշտ է մաքուր թուղթ, որն անհրաժեշտ է բաժանել չորս մասի: Քառաբաժանը գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել չորս բաժիններից յուրաքանչյուրում: Կարելի է ձևակերպել հետևյալ հանձնարարությունները.

- 1) Որն է նյութի գլխավոր գաղափարը
- 2) Կազմել նյութին վերաբերող մեկ հարց
- 3) Նոր վերնագիր
- 4) Լոգո


Հարկ է նշել, որ քառաբաժանը նպատակահարմար է օգտագործել դասի կշռադաստման փուլում:

**8. Մտագրոհ կամ մտքերի տարափ.** Գրատախտակին գրել մեկնաբանը, շրջանագծել, խնդրել մասնակիցներին շրջանաձև գրառել սեփական բառերը, գաղափարները: Այս հնարը կարելի է կիրառել խթանման փուլում աշակերտների նախնական գիտելիքները պարզելու համար:

## Ուսուցման մեթոդներ



**1.<<ԽՃանկար >>.** Աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում և դառնում ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով, նյութն ուսումնասիրվում է հատվածաբար, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդի բնորոշ առանձնահատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և սովորողի, և սովորեցնողի դերում: Ներկայացնում այս մեթոդը գծապատկերի միջոցով.



Ուսումնասիրվող թեման բաժանում ենք առանձին հատվածների ( տվյալ դեպքում՝ չորս): Նյութը ուսումնասիրվում է այնպես, ինչպես նշված է գծապատկերում:

**2.Դասախոսություն.** տեղեկատվության, նյութի համակարգված ներկայացումն է ուսուցչի կողմից: Այս մեթոդը կարելի է դասել ուսուցման ավանդական մեթոդների շարքին, բայց ունի նաև որոշ առանձնահատկություններ: Դասախոսության խնդիրը գիտելիքի, տեղեկատվության փոխանցումն է սովորողներին: Խմբի խնդիրն է ընկալել և պահպանել այդ գիտելիքները: Լսարանի ընդգրկումն ուսուցման գործընթացին տեղի է ունենում հիմնականում լսելու միջոցով: Սա նշանակում է, որ դասախոսությունը ըստ էության պասիվ գործընթաց է և գործնականում խմբի մասնակիցներին փոխհարաբերվելու հնարավորություն զրեթե չի տալիս: Չնայած ուսուցման մեթոդների հարստացմանը, այժմ էլ դասախոսությունն է ձևավորում նյութի փոխանցման ակտիվ ձևերի հիմքը: Եվ հատկապես դասախոսությունն է, որ շատ հաճախ կիրառվում է ոչ գրագետ և անարդյունավետ ձևով: Հաճախ դրա պատճառը շատերի կողմից ընդունված այն մոտեցումն է, թե լայն ու խորը գիտելիքների տիրապետող մասնագետը նույն հաջողությամբ կարող է փոխանցել այդ գիտելիքները ուրիշներին: Ցավոք, միայն առարկայի լավագույն իմացությունը նյութը հետաքրքիր և արդյունավետ հաղորդելու չափանիշ չէ:

Հաջողված և արդյունավետ դասախոսության գրավականը լսարանի հետ կայուն հաղորդակցումն է և քաջատեղյակությունը տվյալ ոլորտում: Այսպիսի համադրումը դասախոսությունը դարձնում է հետաքրքիր, որին էլ խումբը պատրաստվածությամբ միանում է: Այս մոտեցումը հաջող կիրառելու համար հարկավոր է զարգացնել այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են ցանկացած լավ դասախոսի համար:



Սովորողների կողմից նյութի ընկալումը և յուրացումը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով կարելի է դիմել հետևյալ քայլերին.

-դասախոսության նյութը կառուցել ըստ որոշակի հերթականության, որպեսզի հասկանալի լինի յուրաքանչյուրին

-պատմել խմբին թեմայի մասին, նյութը ներկայացնել պլանավորված, կրկին անդրադառնալ դասախոսության հանգուցային մասերին

- ներկայացնել տեղեկատվությունը հաշվի առնելով խմբի ուշադրության կենտրոնանալու հնարավորությունը: Ըստ ընդունված տեսակետներից մեկի՝ այն 20 րոպե է, որի ընթացում կարող է լինել դադարը հարց ու պատասխանի կամ լրացուցիչ նյութ բաժանելու համար: Եվ ամենակարևորը, պետք է հաշվի առնել լսարանի տարիքային առանձնահատկությունները:

**3.Գնահատվող բանավեճ.** Ժամանակակից դիդակտիկայի մեջ կիրառվող շատ կարեւոր և արդյունավետ մեթոդներից է: Գնահատվող բանավեճը մտքերի, դրույթների, կարծիքների նպատակամետ և որոշակիորեն կարգավորված փախանակություն է: Մեթոդի գլխավոր նպատակը իմացական հետաքրքրության խթանումն է: Բանավեճն ուղղված է սովորողների կողմից գիտելիքների ձեռքբերմանը, սեփական կարծիքի ամրապնդմանը, այն պաշտպանելու կարողության զարգացմանը: Բանավեճը արդյունավետություն է հանդես բերում տեղեկատվության ամրապնդման, ուսումնական նյութի ստեղծագործական ընկալման և արժեքային կողմնորոշման ձևավորման առումով:

Ընթացքը. Ձևավորվում են 5-6 հոգանոց 2 խումբ, որոնք պետք է ներկայացնեն թեմայի կամ հիմնահարցի մասին 2 հակառակ կարծիք, իսկ մյուսները ուսուցչի հետ միասին տեղավորվում են նրանց շուրջը և լսում: Աշակերտները և ուսուցիչը դիտարկում են բանավեճի մասնակիցներից յուրաքանչյուրին՝ բանավեճում ունեցած ներդրման համար: (Գնահատման թերթիկը կցվում է) Բանավեճը տևում է 8-20 րոպե: Թեմայից չջեղվելու համար մասնակիցներն առաջնորդվում են նախապես կազմված պլանով:

Բանավեճի գնահատման թերթիկ.



Բանավեճի գնահատման թերթիկ.

աշակերտներ

		Ա	Բ	Գ	Դ	Ե
+2	Քննարկվող հարցի մասին որոշակի դիրքորոշումը					
+1	Էական, տեղին միտք, դիտարկում, դիտողություն					
+2	Ապացույցներ, որոնք հաստատում են միտքը կամ փաստացի տվյալների մեջբերումը					
+1	Քննարկման մեջ մեկ ուրիշի ներգրավումը					
+1	Հարց միտքը ճշգրտելու կամ քննարկումը շարունակելու նպատակով					
+2	Համանմանություններ գտնելը, զուգահեռներ գտնելը					
+2	Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող մտքերի բացահայտումը					
+2	Ոչ տեղին դիտողությունների բացահայտումը					
-2	Անուշադրությունը կամ ուրիշի ուշադրությունը շեղելը					
-2	Խոսողին ընդհատելը					
-1	Ոչ տեղին դիտողությունը					
-3	Քննարկման մենաշնորհումը					
-3	Անձնական վիրավորանք					
	Ընդհանուր միավորներ					

**4.Խմբային հետազոտություն.** սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանք է, այստեղ ուսուցչի դերը մեծ է, նա ուղղորդող է, կազմակերպող, ուսու-



ցիչը աշխատում է առանձին խմբերի հետ, խորհուրդներ է տալիս, բայց չի սահմանափակում աշակերտների ինքնուրույնությունը և ազատությունը: Մեթոդը ներկայացնում է քակլերով:

1. ուսուցիչը ընտրում է ուսումնասիրության համար թեմա, ներկայացնում է թեման և անհրաժեշտ գրականությունը
2. խմբերը քննում են նյութերը և թեման բաժանում ենթաթեմաների
3. խմբերում աշակերտները բաժանում են աշխատանքը ներառելով յուրաքանչյուրի մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և կազմում են ուսումնասիրության պլանը
4. որոշ ժամանակ աշակերտները վարում են հետազոտական աշխատանքներ, նախապատրաստում են իրենց ելույթները դասարանի առջև (պաստառ, կոլաժ, սահիկահանդես)
5. խումբը ելույթ է ունենում, խմբերը քննարկում են կատարած աշխատանքը

## Եզրահանգում

Բազմազան ու շատ տարբեր են ուսուցման նոր մեթոդները և այս աշխատության մեջ ես նպատակ չեմ հետապնդում ներկայացնել բոլորը, ինչը , իհարկե, անհնար է: Աշխատանքիս այս մասում կփորձեմ ներկայացնել ինչպես կարելի է զուգակցել ավանդական և ժամանակակից մեթոդները պատմության դասերին: Եվ անցյալում, և ներկայումս դասի ամենատարածված տեսակը խառը կամ համակցված դասն է: Այսպիսի դասը ավանդաբար ուներ հետևյալ կառուցվածք. կազմակերպչական մաս, հարցում, նոր նյութի բացատրություն, ամփոփում, սա համարվում է **պասիվ** ուսուցում, դասի ընթացքում գլխավոր դերը պատկանում է ուսուցչին: Ժամանակակից մանկավարժությունը առաջարկում է նույնիսկ ավանդական դաս անցկացնելու դեպքում փոխել և աշակերտի, և ուսուցչի դերը դասապրոցեսում: Այսօր հաջողության հասնելու համար ուսուցիչներին հարկավոր են երեխաներին կառավարելու և օգնելու նոր եղանակներ, նաև երեխաների արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ մոտեցումների խոր ընկալում:

Մենք բոլորս հաճախ հիշում ենք մեր սիրելի ուսուցիչներին և այն՝ ինչ հատկապես տպավորվել է նրանց սովորեցրածից: Բոլորս ունենք նաև հակառակ փորձը, երբ ոչինչ չենք սովորել, թեպետ մեզ փորձել են սովորեցնել բազում անգամներ: Այս փաստը մրաձելու տեղիք է տալիս: Մա նշանակում է, որ սովորեցնելն ու սովորելը միշտ չէ, որ,



գուզահեռ են ընթանում: Դասագրքերում ամփոփված նյութերի բովանդակությունը պատմելը կամ կարդալը դեռ ուսուցանել չէ: Ինչպես նաև կարդացածը մտապահելը, կամ, որ ավելի վատ է՝ անգիր անելը սովորել չէ: Համեմատենք ուսուցչի գործառույթները ավանդական՝ դեկավար-հսկիչի և նոր՝ աջակցող-դիտարկողի դերերում.

Ղեկավար-հսկիչ	Աջակցող-դիտարկող
-դասախոսում է և հրահանգներ տալիս	-հարցերի միջոցով կողմնորոշում է
-սովորողներին ասում է, թե ինչպես կատարեն առաջադրանքը	-քաջալերում է խմբին լուծելու սեփական խնդիրները
-կարգապահություն է սահմանում	-ընդարձակում և խորացնում է սովորողների հետաքրքրությունները
-անընդհատ սովորողներին վերադարձնում է դեպի առաջադրանքը	-լուծում է կոնֆլիկտները
-հաճախ կազմակերպում է անգիր ուսուցում կամ մեխանիկական կրկնություն	-քաջալերում է մտածողությունը
-հսկում է շարքերով նստած աշակերտների աշխատանքը	-դիտարկում է սովորողներին
	-ապահովում է հետադարձ կապ

Ես, որպես պատմության ուսուցիչ վաղուց եմ կիրառում ակտիվ ուսուցում, իսկ դա նշանակում է, որ դասի գլխավոր դեմքը, դասի առանցքը աշակերտն է և նրա մասնակցությունը դասին միշտ ակտիվ է: Փոխներգործուն և հատկապես համագործակցային ուսուցման մեթոդները ունեն ինչպես դրական ազդեցություն, այնպես այնպես էլ որոշ սահմանափակումներ: Փորձս ցույց է տալիս հետևյալ դրական կողմերը.

- Ուսուցման գործընթացում սովորողների ակտիվության և ներգրավվածության աճը
- Նյութի յուրացման ու ընկալման շրջանակների ընդլայնումը
- նպաստում է նյութի ընկալման մակարդակի պարզելուն և գնահատելուն
- վերաբերյալ սեփական եզրահանգումներ կատարելուն
- նպաստում է սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը

Աշխատանքի ընթացքում նկատել եմ նաև, որ համագործակցային ուսուցում կազմակերպելիս պետք է հաշվի հաշվի առնել ռիսկերը և վտանգները՝

- համագործակցային և փոխներգործուն դասերը պետք է նախապատրաստվեն մանրակրկիտ՝ նատի ռիսկերն ալով այն հանգամանքը, որ դրանց անցկացումը ժամանակատար է և աշխատատար է և աշխատատար է և աշխատատար է

- գոյություն ունի թեմայից շեղվելու հավանականություն
- կարող է ստեղծվել մեծ կախվածություն խմբի անդամներից
- անհրաժեշտ ռեսուրսների ոչ բավարար քանակ
- հետաքրքրությունների, աշխատանքի ծավալի և ժամանակի անհամապատասխանություն

Ինչպես ավանդական, այնպես էլ փոխներգործուն և համագործակցային ուսուցման դեպքում հաջողության առանցքը ուսուցչի նախապատրաստությունն է: Ուսուցիչը պետք է պլանավորի ոչ միայն բովանդակության մատուցումը, այլ նաև աշակերտների գործողությունները և գնահատումը:

## Ամփոփում

Միանգամայն դրական համարելով անցյալի նկատմամբ հարգալից վերաբերմունքը, կարծում եմ, որ մարդկային հասարակությանը մշտապես ուղեկցում են փոփոխությունները: Իսկ դա նշանակում է, որ գերինդիորդ անցյալի լավագույն ձեռքբերումները պահպանելուց զատ նաև նոր իրողությունները հաշվի առնելն է: Ավելին, պահանջ – մունքների ավելացմանն ու փոփոխմանը զուգընթաց, փոփոխվում են նաև հասարակության ակնկալիքներն ու պահանջները կրթության համակարգից: Կրթության ոլորտում հնի ու նորի համադրությունը միանգամայն բնական է և բխում է զարգացման տրամաբանությունից: Կրթական համակարգը երկու գործառույթ է կատարում՝ պահպանողական ( գործող արժեքների, մշակույթի վերարտադրություն ) և զարգացման ( նոր միտումներին արձագանքում և նորի ստեղծում ): Սա նշանակում է, որ եթե կրթական համակարգը չի ընդունում փոփոխությունների անհրաժեշտությունը, , ապա, ըստ էության, չի կարող իրականացնել իր երկրորդ գործառույթը: Հետևաբար, չպետք է վախենալ փոփոխություններից: Պարզապես նորից պետք է խելամիտ օգտվել, որպեսզի այն մի կողմից նպաստի ուսուցչի մասնագիտական զարգացմանը, մյուս կողմից՝ ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Այսինքն, հասարակական փոփոխություններն ուսուցչի համար պատեհ առիթ են վերանայելու, թե ինչից պետք է հրաժարվել, ինչը պետք է պահել, ինչը պետք է սովորել ուրիշներից: Մի առիթով Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի դեկան Գորդոն Բրաունն ասել է. <<Ուսուցիչը պիտի օժտված լինի մարգարեի հատկանիշներով, որովհետև նա պատրաստում է մարդկանց 30-50 տարի հեռավորության վրա գտնվող ապագա հասարակության համար >>:





## Գրականության ցանկ

Հանրակրթության պետական կրթակարգ, Անտարես, Երևան 2004

Հայոց պատմություն, ավագ դպրոցի (10-12-րդ դասարաններ) մեթոդական ձեռնարկ,  
Զանգակ, Երևան 2009

Մասնագիտական զարգացման ձեռնարկ Ա. Արնաուդյան, Ա. Գյուլբուդադյան, Ս.Խաչատրյան, Ս. Խրիմյան, Մ.Պետրոսյան Երևան, 2004

Համագործակցային ուսուցում Ձեռնարկ, Երևան, Անտարես 2006

Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Մասնագիտական զարգացում

Ս.Վարդումյան, Ա.Հովհաննիսյան, Գ.Վարելլա, Երևան , Նոյան տապան, 2003

Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան

Լ.Ալեքսանյան, Ն.Թորոսյան, Մ.Պետրոսյան, Երևան 2004